հարկի անվանը «բաջ-ի բուղուրդ», այսինքն «մեծ բաջ» կասվի: Այս երկրորդ տեսակի ապրանքները շուկայում ծախվելիս, դրանց համար առանձին վերցված կնիքի հարկին «բաջ-ի թամղա» կասվի: Թամղան այստեղ ընդհանրապես բաջ (այսինքն հարկ) իմաստով է օգտագործված»[1]: Հարկը դանձելու ժամանակ որպես չափի միավոր ընդունված էր՝ ուղտի, ձիու, ավանակի բեռը (լուկ), բամբակյա, բրդյա, մետաքսյա ապրանքների համար՝ թուփը (մի ամբողջական կտոր), թանկարժեք մետաղների, զոհարեղենների, զարդարանքների համար՝ մսկալը[2]:

* * *

1515—1516 թթ. երբ Արևմտյան Հայաստանը և Քրդստանը միացան Օսմանյան կայսրությանը, քրդական կյանքում տիրող ֆեոդալական հարաբերությունների մեջ ոչ մի էական փոփոխություն չկատարվեց և չէր էլ կարող կատարվել:

Բոլոր քուրդ էմիրներն ու բեկերը փաստորեն պահպանեցին իրենց նախկին արտոնությունները: Նրանք թուրքական կառավարությանը ենթարկվում էին ձևականորեն: Դեռ միացումից հետո էլ քրդական էմիրների մի մասը շարունակում էր տատանվել թուրք ու ղզլբաշ հովանավորների միջև ընտրություն կայացնելու հարցում: Շեհրիզորի (Դիարբեքիրի) էմիր Թիմուր խանը մինչև իսկ 1580 թ. հանդես էր գալիս մերթ թուրքական և մերթ ղզլբաշական օրիենտացիայով[3]:

Մանր ու երկրորդական նշանակություն ունեցող քուրդ բեկերը միացումից հետո ձեռք բերեցին կիսանկախություն: Նրանց զինվորական ուժը օգտագործվում էր օսմանցիների կողմից, որպես առաջապահ ուժ, ոչ միայն Պարսկաստանի դեմ, այլև Եվրոպայում մղված պատերազմների ընթացքում: Այստեղից էլ հասկանալի է այն տիրալիր քաղաքականությունը, որ վարում էր Օսմանյան կառավարությունը քուրդ բեկերի նկատմամբ: Կառավարությունը առատորեն պարգևատրում էր նրանց հողային տիրույթներով:

Եթե քրդական էմիրները ստանում էին ամբողջ մարզերի կառավարում Քրդստանում ու Հայաստանում, ապա մանր բեկերը հատուկ սուլթանական հրովարտակներով ստանում էին մինչև իսկ տարեկան 70 հազար ակչե եկամուտ բերող զիամեթներ[4], թիմարներ, ինչպես նաև հողային տիրույթներ՝ «օջակլըկ», «արփալըկ» իրավունքներով[5]: Բացի այդ, քրդական բեկերը տիրում էին ամբողջական մարզերի մյուլքի իրավունքով, պետությունից ստանալով հատուկ վիլայեթներ՝ մյուլք-նամեներ[6]: Մյուլքի տարբերակը հանդիսանում էր կառավարության կողմից քուրդ բեկերին հանձնված «իկտա-ի թեմլիքին» (ikta-i temliki)[7]:

---

[1] Տե՛ս, M. Fuat Köprülü „bâc", Islam ansiklopedisi, II cilt, Istanbul 1952, s, 189.

[2] Հասան փադիշահի Բայբուրտ քաղաքի «Բաջ-ի բուղուրդ» և «Ցամղա-ի սիահի» ընդարձակ կանոն-նամեն տե՛ս, Tafsil-i kanunnâme-i tamga ve bac ber mucebi kanun-i Hasan padisah (Bitlis канунu. s. 184).

[3] *B. F. Charmoy*, Chèrêf-Nâmeh ou fastes de la nation Kourde par Ghéréf-Ouddine, prince de Bitlis, tome II, I-ére partie, page 113.

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում, էջ 182:

[6] Նույն տեղում, էջ 33:

[7] Նույն տեղում, էջ 112: